ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» դեկտեմբերի 2018 թվականի N:395-Ա, ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի N 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատարի 2018 թվականի նոյեմբերի 20-ի N 184, «Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2018 թվականի նոյեմբերի 24-ի N 129, «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի N 164 և «Արթիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի 2018 թվականի նոյեմբերի 30-ի N 144 հրամանները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-34) անհատական կազմում Հովհաննես Հարությունյանի փոխարեն ընդգրկել Կարեն Գևորգյանին:

2. «Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով

բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-35) անհատական կազմում Շողակաթ Մակարյանի փոխարեն ընդգրկել Զավեն Մանուկյանին:

3. «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-36) անհատական կազմում Սուսաննա Պետրոսյանի և Անահիտ Խաչատրյանի փոխարեն ընդգրկել համապատասխանաբար Վռամ Մելիքյանին և Լենա Ճաղարյանին:

4. «Արթիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի (ՈՒՀ-37) անհատական կազմում Յուրիկ Ղազոյանի և Արփինե Մանուկյանի փոխարեն ընդգրկել համապատասխանաբար Բաբիկ Մարտիրոսյանին և Սաթենիկ Շախպազյանին:

5. Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի մարտի 30-ի «Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության առողջապահական կազմակերպություններում հանձնաժողովներ ձևավորելու, հանձնաժողովների անհատական կազմերը, աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի ապրիլի 9-ի N 70-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 62-Ա որոշման 1-ին կետով հաստատված՝

1) 6-րդ հավելվածի 1-ին կետում «Հովհաննես Հարությունյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, հանձնաժողովի նախագահ» բառերը փոխարինել «Կարեն Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Բեռլին պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար, հանձնաժողովի նախագահ» բառերով:

2) 7-րդ հավելվածի 1-ին կետում «Շողակաթ Մակարյան - «Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, հանձնաժողովի նախագահ» բառերը փոխարինել «Զավեն Մանուկյան - «Ախուրյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, հանձնաժողովի նախագահ» բառերով:

3) 8-րդ հավելվածի 1-ին կետում «Սուսաննա Պետրոսյան- «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, հանձնաժողովի

նախագահ» և 2-րդ կետում՝ «Անահիտ Խաչատրյան - «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ, հանձնաժողովի անդամ» բառերը փոխարինել համապատասխանաբար «Վռամ Մելիքյան - «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար, հանձնաժողովի նախագահ» և «Լենա Ճաղարյան - «Մարալիկի առողջության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության թերապևտ, հանձնաժողովի անդամ» բառերով:

4) 9-րդ հավելվածի 1-ին կետում «Յուրիկ Ղազոյան - «Արթիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, հանձնաժողովի նախագահ» և 5-րդ կետում՝ «Արփինե Մանուկյան - «Արթիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կադրերի տեսուչ, հանձնաժողովի քարտուղար» բառերը փոխարինել համապատասխանաբար «Բաբիկ Մարտիրոսյան - «Արթիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, հանձնաժողովի նախագահ» և «Սաթենիկ Շախպազյան - «Արթիկի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնտեսագետ, հանձնաժողովի քարտուղար» բառերով:

Կ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է